

ԱՐԺԱՆԹԻՆՀԱՅԵՐՈՒ ԲՈՂՈՔԸ ԷՐՏՈՂԱՆԻ ԴԵՍ

Posted on September 9, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



«Արմենիա», Պուլենոս Այրես

Շաբաթ, Սեպտեմբեր 7ին, հակառակ տեղատարափ անձրեւին, Արժանթինի հայ համայնքը բողոքեց Թուրքիոյ Վարչապետ Ռեճեպ Թալիպ Էրտողանի դէմ, որ Պուլենոս Այրես կը գտնուէր 2020 թուականին համար Ողիմպիական Խաղերու նստավայրը Պոլիս քաղաքի նշանակումը քաջալերելու նպատակով: Ցուցարարները յատկապէս շեշտեցին Մարդկային Իրաւունքներու դէմ Թուրքիոյ ճնշումները եւ 1915/23 թուականներու Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ իր ժխտողական քաղաքականութիւնը:



«Արմենիա», Պուլենոս Այրես

Շաբաթ, Սեպտեմբեր 7ին, հակառակ տեղատարափ անձրեւին, Արժանթինի հայ համայնքը բողոքեց Թուրքիոյ Վարչապետ Ռեճեպ Թալիպ Էրտողանի դէմ, որ Պուլենոս Այրես կը գտնուէր 2020 թուականին համար Ողիմպիական Խաղերու նստավայրը Պոլիս քաղաքի նշանակումը քաջալերելու նպատակով: Ցուցարարները յատկապէս շեշտեցին Մարդկային Իրաւունքներու դէմ Թուրքիոյ ճնշումները եւ 1915/23 թուականներու Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ իր ժխտողական քաղաքականութիւնը:



Բողոքի ցոյցը նախաձեռնեց Հ.Յ.Դ. Արմենիա Երիտասարդական Միութիւնը, որու Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Ռազմիկ Նալպանտեանը ընդգծեց, որ «Թուրքիոյ նշանակումը որպէս 2020 թուականի Ողիմպիական Խաղերու կազմակերպիչ երկիր բոլորովին կը հակասէ ողիմպիական էութիւնն ու ոգին, տրուած ըլլալով որ անոր նպատակներէն մէկն է ազգերու համախմբումը մարզախաղի միջոցաւ»:



Իր խօսքին մէջ Նալպանտեան նոյնպէս ըսաւ. «Եթէ Թուրքիա նպատակ ունի անգամ մը եւս իր թեկնածութիւնը ներկայացնելու որպէս Ողիմպիական Խաղերու կազմակերպիչ երկիր, Էրտողանի կառավարութիւնը, որ մինչեւ օրս կը շարունակէ Հայոց Ցեղասպանութեան հանդէպ իր ժխտողական քաղաքականութիւնը, եւ վերջերս ուղղակի իր երկրի բնակչութեան վրայ ճնշած է՝ Թաքսիմ հրապարակի ցոյցերու ընթացքին ու բազմաթիւ լրագրողներու բանտարկութեամբ, պետք է ընդունի քիւրտ ժողովուրդի իրաւունքները եւ վերջ դնէ իր հարձակողական արտաքին քաղաքականութեան, որու հետեւանքով հարակից երկիրներու կայունութիւնը վտանգի

տակ դրուած է»:



2020 թուականի Ողիմպիական Խաղեր

Թուրքիան աշխատանքի կոչած է Արժանաբանական բռնակալ վերջին կառավարութեան «պատկերը մաքրող» ընկերութեան

ՊՈՒԷԼՈՍ ԱՅՐԵՍ («ԱՐՄԵՆԻԱ» թերթ).– Թուրքիոյ Ողիմպիական Կոմիտէն, որ ներկայիս իր ամբողջ ուժը կեդրոնացուցած է երկիրը 2020 թուականի Ողիմպիական Խաղերուն նստավայրը հռչակուելու հեռանկարին, աշխատանքի կոչած է այդ նոյն հրապարագրական ընկերութեան որ 1978ին Արժանաբանական զինուորական բռնակալ կառավարութեան օժանդակած էր իր «պատկերը մաքրելու» ուղղութեամբ:

Պուրսոն-Մարսթէլլէր հանրային յարաբերութեանց միջազգային գործակալութիւնը այդ օրերուն մշակած էր «Արժանաբանականներու ուղիղ եւ մարդկային ենք» տխրահռչակ լոզունգը, առ ի պատասխան «Մարդկային Իրաւանց բռնակալութեան դէմ միջազգային բողոքներուն», ըստ զինուորական կառավարութեան ժամանակ պաշտօնական հրապարագրական միջոցներու մասին Ռուպէն Մորալէսի կողմէ պատրաստած ուսումնասիրութեան: Նշեալ զեկոյցին համաձայն, ընկերութիւնը նոյնպէս աշխատանք տարած էր «վերապրողներուն, արտաքստւածներուն, անոնց ընտանեկան պարագաներուն եւ զոհերուն ամբաստանութիւնները հակասելու համար, տրուած ըլլալով որ անոնք արդէն տարածուած էին աշխարհի տարածքին»:

Արժանաբանական լայնատարած «Փախիւնա/12» օրաթերթի իր սիւնակներէն մէկուն մէջ, լրագրող Հորասիօ Վերպիճքի բացատրեց, թէ սոյն ընկերութեան նպատակն է «իր հաճախորդներուն պատմութիւնը ներկայացնել հարկադրելով անոնց ընկալողներուն, խորհրդարանականներուն, առեւտրականներուն, հաճախորդներուն եւ կամ պաշտօնեաներուն վրայ»:

Թուրքիոյ կողմէ Արժանաբանական բռնակալ վերջին զինուորական կառավարութեան հետ համագործակցող նոյն հաղորդագրական ընկերութիւնը օգտագործելու տեղեկութիւնը տարածուեցաւ այդ երկրի դէմ հայ համայնքի կողմէ կատարուած ընկալողներուն ծիրին մէջ, որ թրքական իշխանութիւնները կ'ամբաստանեն Մարդկային Իրաւանց բռնաբարումները, լրագրողներու բանտարկութիւնները, Թաքսիմ հրապարակի խաղաղ ցուցարարներու դէմ ճնշումները, ինչպէս նաեւ 1915/23 թուականներուն Հայոց Ցեղասպանութեան գործադրման ուղիով իր հեղինակութեան ժխտումը թաքցնելու, օգտագործելով Ողիմպիական Խաղերու առիթը:

